



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՅՈՐԷՆ-ԽՄԻԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅԻՐ ՔԱՂԱՆԱՅ ԿԵՂԵՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 24

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արժասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Զեռֆէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիքաշ, Հայոց եկեղեցի

درسماعده بشکطاشده ارمنى کليساسنده (داجار) فزتهسى مديرى پاپاس زارماو

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զարմարճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հրապրեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐԴԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաս Բնյ. Պալղճեան
5. Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԲ

«Տ Ա Ճ Ա Ր» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գալիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Գալիկեան
ԱՅԵԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բարդէն Ծ. Վրդ. Կիւլէսերեան
ԳՍՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւնուճի
ԵՂԵՍԻԱ.—Բ. Թուրքեան էֆ.
ԵՍՉՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքսեան
ԵՐՋԵԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտանճեան
ԶՄԻԻՌԵՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաստէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
ՄԱՆՉԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան
ՄԱՐՁՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բագարատ Վրդ. Վարդազարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տատեան
ՈՒՇԱՐ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐԻՍ.—ՊԱԼԸՔԷՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մալլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս. Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՋԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եզեկիլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԹ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջնիկեան
ՌՈՏՈՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Ա. Բնյ. Թադմճեան
ՍԱՄՍՕՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապաշեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլէ Բնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէդեան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօփլէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վռամշապուհ Բնյ. Բիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մանիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Խաչին առջին, ԶԱՐՄԱՅՐ ՔԱՆԱՆԱՅ. —Դարմանը, ԳՐ. Ն. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ. —
ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ, Յովակիմ-Աննայի վանք եւղոկիոյ, ԽՈՍՐՈՎ Ս. Վ. ՊԷՂԻԿԵԱՆ. — **ՕՏԱՐ**
ԷՋԵՐ, Յարգանք կրօնքին, Է. ՏՈՒՄԵՐԿ. — **ՄՈՌՅՈՒԱՆ ԷՋԵՐ,** Խաչ, օգնեա ինձ, ՄԵԼՔ.
ԱՐՔԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՅ. — Պատմ Հայ. Զայնագրութեան, ԱՐԻՍ. ՔԶ. ՇԻՍԱՐԼԵԱՆ. — **ԱԶԳԱՅԻՆ**
ԿԵԱՆՔԸ, Շարժական լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽԱԶԻՆ ԱՌՋԵԻ

Հոյակապ, փառայեղ տրարողութիւն-
ներ՝ մոսուորապէս Հայ առաքելական
Եկեղեցիին մէջ՝ կը յատկանշեն վաղուան
տօնը: Խաչին վերացման, Խաչին բարձրաց-
ման, Խաչին փառաբանութեան վսեմ տօնն
է այն, աւանդական-պատմական իրողու-
թիւններու յիշատակ, որ կը համախմբէ
հաւատացեալները Աստուծոյ սուրբ տաճա-
րին մէջ, բարեպաշտիկ երկիւղածութեամբ
խոնարհեցնելու գլուխները երեսմիտ այդ
անարգանաց գործիքին առջեւ, որ Աստ-
ուածամարդուն չարչարանքի օրէն ետքը,
սկսաւ դառնալ պաշտելութեան, երկըր-
պագութեան առարկայ:

Վերացման Խաչի տօնը վերջինն ու փա-
ռապսակն է հանդիսաւոր անդաստաններուն,
որոնք առիթ կ'ըլլան Խաչով եւ Աւետարա-

նով՝ յանուն զանոնք նուիրագործող ու
ներշնչող Աստուածամարդուն՝ հանդիսա-
ւորապէս օրհնելու աշխարհի չորս կողմերը,
արտերն ու անդաստանները, վանքերն ու
անապատները, քաղաքները, աւաններն ու
գիւղերը եւ անոնց մէջ բնակող ժողովուրդ-
ները, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան,
օրհնելու Հայոց հայրապետութիւնը, օրհ-
նելու վերջապէս կեանքի գործունէութիւնն
ամբողջ՝ իր բազմապիսի երեւոյթներուն ու
երանգներուն մէջ

Եւ այն փառայեղ թափօրի միջոցին, որ
վաղն իրիկուն կը կազմուի մեծահանդէս,
Խաչը կը բարձրանայ՝ ծածկուած պատուա-
կան կտաւով, եւ զարդարուած ռեհանով եւ
վարդեղէն ջուրով, ինչպէս կը տրամադրէ
Տօնացոյցը, ու փառաբանութիւններու, եւ
մեղեդիներու զմայլելի եղանակներուն, եւ ա-
ւետարանական ընթերցումներու թովանքին
տակ, ճակատները կը խոնարհին՝ միտքերը
խոկումներու մէջ սուղուած եւ սիրտերն
զգածուած: Խունկի ու կնդրուկի անուշ
բուրումներու մէջ կը բարձրանայ ու կը

վերանայ ինչը, ճշմարիտ հաւատացեալին միտքն ու հոգին ալ վերացնելով՝ հասցնելու համար գաղափարական անմատոյց բարձրութիւններու(*) :

Ինչո՞ւ այս երկիւղած յարգանքը՝ ինչին : Անո՞ր համար որ բացարձակապէս Անմեղը զոհուեցաւ անոր վրայ՝ կորսուած մարդկութիւնը փրկելու, անո՞ր համար որ Գերագոյն Մարդուն կարմիր արիւնը հոսեցաւ անարգանքի, չարչարանքի այդ գործիքին վրայ, երկաթէ բեւեռներ ծակեցին անոր սուրբ, նուիրական մարմինը, գամելով զայն փայտի այդ կտորին վրայ : անո՞ր համար որ այդ կեանքի Փայտը հրաշալի բուժումներու և ուրիշ հիանալի հրաշքներու տկանատես և ականջալուր ըրած է մարդկութիւնը : Ատոնք՝ անշուշտ հզօր պատճառներ են ականածանքի առարկայ դարձնելու ինչպիսիայտը, ատոնք ներշնչած են մեր գոհար շարականներու երանանքնորհ հեղինակները՝ բանաստեղծական ամենէն խորիմաստ խօսքերով, ամենէն նուրբ երանգներով փառաբանելու Յիսուսի ինչը, «նշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամոյն», «փակեալ դրախտին բացող», «Փայտ կենաց», «օգնական հաւատացելոց» : Ատոնք հրահրած են ժողովրդեան բարեպաշտութիւնը, և զանիկա մղած՝ երկըրպազելու «աստուածային սուրբ նշանին» : Ատոնք ներշնչած են ամենախորունկ, զօրաւոր հաւատքը՝ տաղնապի վայրկեաններու մէջ փարկու առ ոտս սուրբ Խա-

չին, և զայն իր կարմիր արիւնով օծող ու սրբացնող ու նուիրագործող ինչպե՞ս ինչպե՞ս սփոյանք վիշտերու, ուժ և կորով՝ դիմագրելու երեւելի և աներեւոյթ թշնամիներու, ձեռնառութիւն՝ չսայթաքելու, չիյնալու համար կորուստի խորխորատին մէջ :

Եւ սակայն այդ ամենէն վեր, ինչը կը բարձրանայ և ընդհանուր քրիստոնէութեան—առանց դաւանարանական խտրութեան—պաշտելութեան առարկայ կը դառնայ, իբրեւ խոտայումը աւետարանական փրկչութեան վարդապետութեանց, իբրեւ խորհրդանիշ Յիսուսի առաջին և մեծ պատուիրանին՝ սիրոյ և անձնութեան կրօնքին : Յիսուս իր խաչափայտով, զոր Գողգոթայի վրայ կանգնեց, մեծագոյն դասը, —գործնական դաս մը—տուաւ տառապող մարդկութեան, անոր ցուցուց փրկչութեան միակ միջոցը, պարտականութեան, սիրոյ, անձնագործութեան ճամբան : Ստուգիւ նեղ ու դժնդակ ճամբայ մը, որմէ հեշտ չէ ընթանալ, ճամբայ մը փշոտ, խոչ և խռթերով լեցուն, ուրկէ քալողը տառապանքի, տաղնապի ամէն աստիճանաւորումներէն պիտի հարկադրուի անցնիլ : Իր մարմինը գուցէ պիտի փեռեկտուի, իր սիրտը բզիկ բզիկ պիտի ըլլայ, տարապարտ թշնամանքներու, դատասիւտումներու տարափ մը պիտի փորձէ ընկճել, ընկուղել զինքը, և սակայն ամենաբարձր գաղափարականը որ իր նպատակահէտը կը կազմէ, պիտի կրնայ ուժովցնել զինքը, պիտի փշրէ բնագործութիւնները, պիտի արհամարհէ զինքը կասեցնել փորձող խոչ և խռթերը, պիտի կոխկրտէ, պիտի ճզմէ փուշ և տատակները, ու պիտի կրնայ հասնիլ սուրբ, նուիրական նպատակի մը որ իր խղճի մղումին զոհացումը, աստուածային պատուէրին կատարումը, ու իր փրկութիւնը պիտի ըլլայ :

Ասիկա ճշմարիտ է մարդուս ներքին, անհատական կեանքին համար, ճշմարիտ է նաեւ ընտանեկան կեանքին համար, ճշմարիտ է մասնաւանդ հանրային կեանքին համար :

Հաւատացեալ. անդրադարձած ես

(*) Խաչվերացի օօնը, Խաչի օօներուն ամենեւեմ մեծը, հաստատուած է մասնաւորապէս ի յիշատակ Խաչի գերեզմանին—628 թուականին, Հերակլ կայսեր օրով—Պարսկաստանէն, ուր Զաւարիս Պարսաւրիկն հետ գերի բարուած էր եւ այնչեղ խորովի մեհեմանին մէջ կը մնար 17—18 օրէի չափ : Այդ գերեզմանէն ետքն է որ Խաչը մեծահանգիստ արարողութեամբ կը կանգնուի Գողգոթայի վրայ, հաստատուելով Խաչվերացի օօնը, զոր Յոյները կը կասեմեն ճիշտ սեպտ. 14ի օրը, իսկ Հայք ասոր մեծաւորութեան կիրակին՝ առաւել հանդիսաւորութիւն թաղու հովար : Վերացման Խաչի օօնին շնորհուած է նաեւ այն աւանդութիւնը թէ Յակոբոս Տեառն եղբայր առաքեալը առաջին անգամ վերցուցած է Խաչը հանդիսաւորապէս եւ օրհնած է ժողովուրդը :

Խաչի այս մեծ դասին վրայ: Խորհած ես թէ ճշմարիտ Բրիտանիային հետեւելիք ուղղութիւնը զոհողութիւնն է միայն: Գիտե՞ս թէ Վերացման Խաչի մեծահանդէս արարողութիւնները՝ փառաբանութիւնն են այդ ամենաբարձր ոգիին, եւ դուն՝ Խաչը պաշտելով եւ անոր երկրպագելով, Յիսուսի տուած վսեմ ու գործնական օրինակին առջեւ կը խոնարհես, թէ այդ սուրբ նշանը խորհրդանշի է քու պարտականութեանդ, զոր ունիս քու անձիդ, քու ընտանիքիդ, քու ազգի՛դ հանդէպ, եւ թէ այդ պարտականութեան դրժում մը, ատոր մէջ թերացում մը՝ թշնամանք մ'է խաչուած Յիսուսին:

Բարեպա՛շտ ու քրիստոնեայ հոգիներ, փորձած էք ըմբռնել Խաչին նշանակութիւնը. սէրը, անձնութիւնը իր ընկերին, իր ազգին, իր հայրենիքին հանդէպ:

Ազնիւ տիկիներն՝ եւ օրիորդներն՝, որ իրրեւ թանկագին զարդ՝ աղամանդակուռ խաչի կը կրէք ձեր կուրծքերուն վրայ, որ իրրեւ հարսանեկան նուէր՝ պաշտօնագէտ խաչ մը կը ստանաք Պատրիարքարանէն, անդրադարձած էք թէ այդ խաչը կը խորհրդանշէ սրտագին անձնուէր սիրոյ պարտականութիւնը՝ զոր ունիք նորակազմ ընտանիքի մը անդամներուն, ձեր հոգեհատորներուն, ազգին թշուառ որբերուն, եւ ամբողջ տառապող մարդկութեան հանդէպ:

Հոգեւորականներն՝, ամէնէն բարձր աստիճանէն սկսեալ մինչեւ ամենէն խոնարհը, որ Խաչը ունինք միշտ ձեռքերնիս, որ լանջախաչը կը կրենք մեր վրայ՝ ոսկեայ կամ աղամանդակուռ, կը յիշենք արդեօք խաչուող Փրկիչին վսեմ պատուէրը՝ անսայթաք յառաջանալու Յիսուսաւանդ պարտականութեան շաւիղին մէջ, խլճի մղումներուն հետեւորդ, դիմելու ո՛ւր որ պէտք մը կայ՝ ճշմարտութիւնը, քրիստոնէական իտեալ կրօնքին փրկարար վարդապետութիւնները քարոզելու, սորվեցնելու ճշմարիտ կրօնափրութեան պատուէրները, Աւետարանի քաղցր խօսքերուն նշանակութիւնը, ի գին նոյնիսկ ամենածանր զոհողութիւններու:

Մըքան բարձր է Խաչին այս նշանակութիւնը, ո՛րքան պերճաբոս իր անբարբառ լեզուն եւ, աւա՛ղ, ո՛րքան հեռու ենք հասնելէ այդ իտեալ բարձրութեան, խու՛լ մեր ականջները՝ լսելու Խաչեցեալին սիրոյ խօսքերը: Խաչը՝ ոսկիէ, աղամանդակուռ, ամէն ձեւերով եւ ամէն մեծութեամբ, կը սիրենք կրել մեր վրայ իրրեւ զարդ, իրրեւ պատուանշան, իրրեւ աշխարհային փառքի արտայայտութիւն: Ո՛ւր էր թէ հեռու չըլլայինք սորվելէ Խաչի ծառը, մեր բարքերուն, մեր նկարագրին անանջատ մասն ընելէ այն վսեմ գաղափարականը՝ անձնութիւնը որ Խաչի ծառին հիմնական ոգին կը կազմէ, որ գիւցտղնական շունչ մը կը փչէ ամէնէն տկար երակներուն մէջ, որ հերոսի կը փոխէ հայրենիքին նուիրուած սիրտը, որ անընկճելի կորով կը ներշնչէ ամէնէն ազազուն կազմուածքներուն, որ ճշմարիտ փառքի պսակը կը հիւսէ ա՛յս կեանքին ու յաւիտենականութեան ալ մէջ: Այն ատեն միայն պիտի կրնայինք գոչել Առաքեալին հետ.

«Այդ ինձ քա՛ւ լիցի պարծիլ, քայց միայն ի Խաչ Տեսուն մերոյ Յիսուսի Բրիտանի»:

ԶԱՐԽԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ

Դ Ա Ր Մ Ա Ն Ը

Հայ Եկեղեցիի բարեկարգութեան հարցին իբր կարեւոր մէկ մասը, անոր հետ զուգընթացաբար կը զրուի եւ կը խօսուի նաեւ Հայ կղերին բարեկարգութեան եւ բարձրացումին մասին: Մինչեւ հիմա զբոռածներուն մէջ շատ իրաւացի կէտեր կան, եւ խնդիրին լրջօրէն ուսումնասիրութիւնը շատ մը իրողութիւններ ու պէտքեր ալ երեւան պիտի հանէ: Շատ ուրախ ենք որ այս մասին Հայ կղերը, ինքը, նախայարձակ կ'ըլլայ իր թերութիւնները քննադատելու եւ դարմաններ ու միջոցներ յանձնարարելու մէջ: Այս յուսատու երեւոյթ մըն է, զոր պէտք է անկեղծօրէն ու ջերմապէս գնահատել: Այս կ'ենթադրէ թէ

Հայ կղերը մտած է ինքնաճանաչութեան շաւղին մէջ, ա'լ կրնայ իր կոչումին հանդէպ կշռել իր կարողութիւնները և անկեղծօրէն յայտնել արդիւնքը: Ըսել է թէ կղերական կոչումին դէպի իտէալ բարձրութիւնները կարօտ մը արթնցած է Հայ կղերին կուրծքին տակ: Մենք՝ աշխարհականներս՝ յաճախ քննադատած ենք կղերը իր թերութիւններուն մէջ. բայց խիղճի պարտք մըն է նաև քաջալերել անոր յառաջդիմասէր մասը և դիւրութիւններ հայթայթել անոր բարձրացումին: Մեզք որ յաճախ քննադատելի, խժժելը, չհաւնիլը սովորութիւն, կամ լաւ ևս է ըսել, մոլութիւն մը կը դառնայ մեզի: Եկեղեցին քանդենք, կղերը հալածենք, կրօնքը վերցընենք, բայց տեղը ինչ դնենք: Այս ժըխտականութիւնը որ մեր ազգային կեանքին տխուր մէկ յատկանիշը կը դառնայ այս վերջին օրերու մէջ, դատապարտելի ու անբանաւոր է պարզապէս:

Բայց դառնալով կղերի բարձրացումի խնդրին, կրնանք ըսել թէ այս խնդիրը երկու կողմ ունի, նախ՝ պէտք է կղերը ինքզինքը բարձրացնէ, ու այն ատեն՝ աշխարհականներն ալ պիտի բարձրացնեն զինքը ու քաջալերեն ամէն կերպով: Այսօր արեւի պէս ակնյայտի ճշմարտութիւն մըն է թէ զարգացած, ուսուալ և իր կոչումին հոգիով. սիրտով փարած կղերականներու պէտք ունինք՝ մայրաքաղաքէն մինչև գաւառի անկիւնները և մինչև յետին գիւղը: Մեր թէ՛ ամուսնաւոր և թէ՛ կուսակից կղերը պէտք է բարձրանայ, զարգանայ, եթէ ոչ յետափնաց կղերին ու իր հովուած հօտին միջև գտնուած անջրպետը ալ աւելի պիտի լայննայ: Այսօր դաւառներու և նոյնիսկ կ. Պոլսոյ մէջ կղերականներ ունինք—և ցաւելով կ'ըսեմ՝ մեծամասնութիւնը կը կազմեն անոնք — որոնց կարողութիւնը և բարոյականը ամէն կերպով իրենց ժողովուրդին լուրջ ու զարգացած մէկ կարեւոր մոտէն շատ վար կը գտնուի, ու այս իրողութիւնը քիչ դեր ունեցած չէ Հայ կղերին իր հօտին առջև վարկաբեկումի տխուր իրականութեան մէջ: Այլ մարդիկ ո'չ վեղարէն կ'ակնածին, ո'չ

ալ գաւաղանէն, եթէ անարժան է զայն կրող գլուխն ու բռնող ձեռքը: Արժանիքը և ներքին մարդը կը փնտռուի և մեծ իրաւունքով: Տէր Հայրը պէտք է իսկապէս հայր ըլլայ ժողովուրդին և Հայր Սուրբը՝ իսկապէս սուրբ հայր:

Ըսել կ'ըլլայ թէ մենք հոգիով, սիրտով ու միտքով զարգացած ու բարձրացած կղերականներու պէտք ունինք. ու այդ ալ կղերականներ պատրաստելու համար ծրագրուած վարժարաններու մէջ, մեծ խնամքով ու զոհողութիւնով պէտք է պատրաստենք: Բոլոր հոգիովս կը ծափահարեմ ներկայ քանի մը ընծայաբաններ բարձրացնելու, կանոնաւորելու գաղափարը, և եթէ պէտք ըլլայ նաեւ բանալու առաջարկուիր: Կը ծայնակցիմ ամէն անոնց, որ գովելի նախաձեռնողութիւնով կը փափաքին Եկեղեցիին ու ազգին ճակատագիրը կարող և արժանաւոր եկեղեցականներու ձեռքերուն մէջ տեսնել: Կ'արժէ խորհիլ այս խնդիրին՝ ապագային համար: Բայց ներկային համար ինչ կըրնանք ընել. այս վիճակիտ անմիջական դարման մը չկայ: Ահա այս է շատ կարեւոր կէտ մը՝ Հայ կղերին բարեկարգութեան խնդրին մէջ:

Այսօր մէջ տեղը ունինք բազմաթիւ կուսակից և ամուսնաւոր կղերականներ, որոնց մէջ կան արժանաւորներ և անարժաններ, բայց դեռ պէտք ալ ունինք կրող ու գործունեայ ճշմարիտ կղերականներու: Այսօր շատ մը թեմեր կարող առաջնորդներ չունին, շատ հօտեր՝ քարոյիչներ, շատ եկեղեցիներ՝ քահանայ: Ըսել է որ թէ՛ անարժաններու և անկարողներու կողմէ գրաւուած, թէ՛ ալ բոլորովին բաց տեղեր ունինք, հետեւաբար պէտք՝ նոր եկեղեցականներու: Ներկայ վիճակին իբր դարման մինչև իսկ եկեղեցականներու կողմէ վերջերս առաջարկ եղաւ անկարողները կղզիացնելու, անարժանները պատժելու և այլն: Բայց ես կը կարծեմ թէ՛ ատոր ազդեցիկ միջոցը կարելի եղածին չափ չուտ կարող եկեղեցականներ մէջտեղ բերելն է: Մեր բարեկարգելիք ընծայարաններուն և բանալիք հոգեւոր դպրոցներուն արդիւնքը մեր ճիշտ

այսօրուան պէտքը չի գոհացներ: Ուրեմն ի՞նչպէս անմիջապէս հայթայթելու է կարող եկեղեցականներ, որ անկարողներ և անարժաններ չեղորացուին և նոր գործունէութեան թափ մը յառաջ գայ Հայ եկեղեցականութեան մէջ: Այդ կրնայ ըլլալ կարող եւ յաւմար աշխատակազմերու կողմէն աւաարեգ խնայող դիւրացնելով: Եւ այդ ալ կարելի է կղերականութեան պայմանները քաղելու եւ սանելի ընելով:

Աւելի բաց խօսինք:

Ա. Պէտք է կղերականին նիւթականը բարելաւել, վերցնել նուէրի դրութիւնը և ամսականով կանոնաւոր ապրուստ մը ապահովել: Երբեմն ժողովուրդը մեծ ակնածանքով ու երկիւղածութիւնով քահանային կամ վարդապետին ձեռքը համբուրելով կուտայ եղբւր իր նուէրը, հիմա չիտար, քիչ կուտայ: Հոգ չէ թէ ո՞վ է անոր պատճառ տուողը: Երբեմնի տնտեսական պայմանները տարբեր էին, հիմա բոլորովին տարբեր: Իրողութիւն է որ մէկ կողմէ հացակարօտ քահանաներ ունինք, անոնք հազարաւոր ոսկիներու տէր կուսակրօններ, արդիւնք կղերին նիւթականին անորոշ ու անկանոն պայմաններուն: Զատիկին ու Ծնունդին տնօրէնէքներու աստիճան միայն իր տունը այցելող քահանային համար ժողովուրդը՝ յաճախ իրաւունքով՝ կը խորհի թէ դրամի համար կուգայ, ու այդ կը ստորնացնէ քահանային հովիւի, հոգեւոր հօր դերը: Եկեղեցին պէտք է հոգայ իր պաշտօնեան, և ան ալ ձրի կատարէ իր ամէն հոգեւոր պարտականութիւնները: Թող մեր կղերականները ձեռքերին խիղճերուն վրայ դնեն, ու ըսեն թէ իրենց ամէն մէկ կարգակից եղբայրը դարձիւ մը և ջովի մը յուղարկաւորութեան նոյն սիրտով ու փութաջանութիւնով կը մասնակցի: Մինչդեռ պէտք է որ աւելի անխտրտաէր ըլլային ու անկեղծ՝ իրենց հօտին իւրաքանչիւր անդամին համար: «Մշակն արժանի է վարձու իւրում»: Վարձք տանք մշակին ո՛չ թէ նուէր. և այդ վարձքն ալ իր արժանիքին, կարողութեան համեմատ, որ գրգիւ մը ըլլայ իրեն՝ զարգանալու և իր արդար վարձքին աւելի արժանի ըլլալու համար:

Բ. Վերցնել կուսակրօնի և ամուսնացեալ կղերի խտիրը: Ահա մեր կղերականութեան անկումին մէկ մեծ պատճառը: Պատճառաբարան զրկուած բարեփոխումի յիշատակագիրներուն մէջ այս կէտին շուրջ հական առաջարկներ կը պարունակէ Ադր. Պոլսոյ Կրօն. Ժողովին զրկածը: Ի՞նչ իրաւունքով հոգեւոր բարձրագոյն պաշտօնները կուսակրօններու միայն յատկացնել, և քահանան թողուլ իր պաշտօնի սահմաններուն մէջ ամրափակ: Արժանիքը կուսակրօններուն վրայ միայն կը գտնուի, կամ թէ մէկու մը կուսակրօնութիւն ուխտելը մեծ առաւելութիւն մը կուտայ իրեն՝ բարձր պաշտօններու հասնելու. համար՝ Նոյնքան սուրբ չէ՞ նաև քահանային պաշտօնը, և աւելի ժողովրդական՝ անոր կոչումը: Քահանան իբր ընտանիքի հայր, ժողովուրդի հովիւ նախընտրելի չէ՞ աշխարհի կեանքէն անտեղեակ կուսակրօնէն: Ի՞նչ կայ ամուսնութեան մէջ դատապարտելի: Աշխարհում ինչ ամենակարեւոր պաշտօններու մէջ գտնուողները ամուսնացեալ չեն, և առաջնորդի մը, եպիսկոպոսի մը և նոյնիսկ կուսակրօնի մը պաշտօնին չափ կարեւոր, կենսական և մինչեւ անգամ նուիրական պաշտօններու գլուխ ընտանիքի հայրեր չկան: Պէտք է քահանան մինչեւ Կաթողիկոսական աթոռը բաց գտնէ ասպարէզը իր առջեւ: Այո՛, պէտք է քարոզէ ալ, որովհետեւ ժողովուրդին ամենօրեայ կեանքին հետ չփութի մէջ գտնուելով՝ աւելի մօտէն կրնայ գիտակ ըլլալ անոր ցաւերուն: Պէտք է արտօնել նաև այրի քահանաներուն և երիցուհիներուն ամուսնութիւնը, որուն վրայ շատ գրեցեալ ու խօսուցեալ: Առանց այս արգելքներուն ու դժուարութիւններուն վերցուելուն, կարող աշխարհականներէն շատեր, որ պիտի ուզէին հոգեւոր պաշտօնեայ դառնալ, ընտել պիտի չմօտենան այդ ասպարէզին, և ազգը այդ կերպով կը զրկուի իր կարող և օգնելու պատրաստ զաւակներուն աջակցութենէն: Անգամ մը պատահած է ինծի դեռատի կուսակրօնի մը բիրտ վերաբերումը և յանդիմանութիւնը տեսնել՝ ուղղուած իր տարիքին կրկինէն աւելի տարիք ու

նեցող պիտի առնուի և փորձառու քահանայի մը, և այդ ալ յանխաբի: Եւ կը կարծեմ թէ զարգացած, արժանիքի տէր աշխարհական մը ընտելացած պիտի չուզէր քահանայ ըլլալ և այդպէս անփորձ կուսակրօն առաջնորդի մը կամ տեղապահի քահանայութիւն ծառայել: Այո՛, լայն բանասէր դուռները արժանաւոր աշխարհականները ընդունելու համար հոգեւոր պաշտօնի մը մէջ, քանի որ անոնց ճամբուն մէջ դրուած վերոյիշեալ արգելքներուն վերցուիլը չէ որ պիտի քանդէր մեր Եկեղեցին, որովհետեւ ոչինչ կայ անոնց մէջ հակառակադրական:

Ի. Իսկ զայնով կուսակրօնութեան՝ այն ալ կրնայ իր դարաւոր կոչումին մէջ արդիւնաւորապէս մատուցանել իր օժանդակութիւնը Եկեղեցիին պայծառութեան մէջ: Եւ այն ատեն է որ ճշմարտապէս և կամաւորապէս կուսակրօնութիւն ունեցողները պիտի ունենանք իրրեւ կուսակրօն: Որովհետեւ, անկեղծօրէն խօսելով, ես կը հաւատամ որ եթէ մեր հիմնական կուսակրօնները իրենց դիրքը մեր այժմու քահանաներու դիրքին հետ փոխելու ստիպուէին՝ կուսակրօն մնալ ուզողներու թիւը թերեւս հարիւրին յիսունէն ալ վար իջնար: Եթէ կուսակրօն ու ամուսնաւոր կղեր հաւասար իրաւունքներով և վարձատրութիւններով պատկուին, այն ատեն կուսակրօն ըլլալու իսկապէս փափաքողը կրնայ ուրիշ կերպով աւելի օգտակար ծառայութիւններ մատուցանել ազգին ու Եկեղեցիին: Զոր օրինակ, կուսակրօնները աւելի գործնական մը կրնան կառարել իրրեւ Աստուծոյ Բանին շրջուն քարոզիչ, իրրեւ եկեղեցիներու վիճակը քննող շրջուն հոգեւոր պաշտօնեայ, իրրեւ վանքերու մէջ հոգեւոր ուսումնասիրութիւններով պարապով եկեղեցական, և այլն և այլն:

Ուրեմն մէկ խօսքով մեր ներկայ եկեղեցականութիւնը կարելի եղածին չափ շուտ բարձրացնելու համար միակ միջոց մը ունինք, որ է նաեւ միակ դարմանը այդ մեծ ցաւին. այսինքն կարող եւ յարմար աշխարհականներուն հոգեւորական ասպարհը ընդգրկելու համար հիմնական դարձնել:

Քեռա

ԴՐ. Հ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ

ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

ՅՈՎԱԿԻՄ-ԱՆՆԱՅԻ ՎԱՆՔ ԵՒ ԴՈԿՈՑ

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Յովակիմ-Աննայի երաշակերտ վանքին.

Գրուած 1841 Յուլիոս 15ին (*).

Մեր Սրբազան Հայրը կանուխէն իր միտքը դրած էր հիմէն նորոգել Սուրբ Ուխտս, բայց ժամանակին բազմավիշա նեղութիւնը չէր ներեր, որուն վրայ աւելցած էր Սարակինոսներու անողորմ բռնութիւնը. սակայն, հուսկ ուրեմն 1828ին կատարուեցաւ իր սրտին փափաքն ու ցանկութիւնը: Թէեւ ժամանակը աւելի դառն էր Ռուսաց Օսմանեան տէրութեան դէմ պատերազմուելովը, բայց իր յոյսը զնկով Բարձրեւոյն Աջոյն ամենակարող զօրութեանը վրայ, իր առաջնորդական յարաւոյց գործադրութեանը ձեռնարկեց: Առաւելապէս գործին գլուխ ելլելուն պատճառ եղաւ շինութեան տարի մը առաջ տեղի ունեցած զարհուրելի դեմադրութիւնը, ուրկէ պատառուելով վնասուեցան և կործանեցան երկու կողմերուն պարիսպները:

Գետնաշարժին յաջորդող տարին, այն է 1828 ապրիլի սկիզբը, շինութեան ձեռնարկուեցաւ, և դեղապանծ վայելչութեամբ յօրինեց տաճարը անսխալ կամարներով և սրբատաշ քարերով, և Ս. Ուխտը պայծառացուց գեղեցկազարդ սենեակներով, չրջապատ պարիսպներով և արտաքին շինուածներով, և ամենակալ Տիրոջը յաջութեամբ, այդ բոլորը աւարտեցաւ մինչեւ սեպտեմբերի վերջը, ինչպէս կը տեսնուի Ս. Տաճարին դրանը վրայ գրուածէն: Ահա այսպիսի մեծագործութեամբ, ես տուաւ ծաղկեցաւ մեր Գեր. Ս. Հայրը, մանաւանդ երեւելի և ընտիր աշակերտներու բազմութեամբ, որոնց իւրաքանչիւրին անունները արժան կը սեպենք հոս դնել:

Նախ Յովհաննէս վարդապետ, որ հիմայ Ակնայ վիճակին եպիսկոպոսն է, Զաքարիա վարդապետ, Եսայի վարդապետ,

(*) Շառ. Աստուծոյ քիւիկ և վերջ

նուստ Գալուստ վարդապետս (որ ջանացի այս պատմութիւնը իբր յիշատակ թողուլ ապագային), Գաբրիէլ վարդապետ, Ներսէս վարդապետ, Յովհաննէս վարդապետ, Թադէոս վարդապետ: Ասոնք իր կենդանութեանը Ս. Աննայի միաբաններն էին, որոնք տաճարին շինութեան ատենը քրտնաթոր նեղութեամբ գիշեր ու ցորեկ կիրի ու կաւի մէջ թաթխուած չաղախուած էին:

Եւ երբ այսպէս բաղմահոգ տառապանքով աւարտեց շինութեան գործը, անկէ ետքը օր ըստ օրէ սկսաւ տկարանալ իր մաքրասուն անձը. ասոր հետ մէկտեղ, կեանքը մաշող առաջնորդական հոգերով ու զբաղումներով կը պարապէր: Ս. Ուխտիս շինութեան չորս տարի վերջը, մահաբեր ցաւերու մէջ ինկաւ, որուն չկրցան բժշկները դարման տանիլ զեղերով: Եւ վերջապէս անմահ թագաւորէն հրաւիրուեցաւ անեղբական կեանքը 69 տարեկան ծերութեան վայելուչ հասակին մէջ, Եւդոկիոյ մէջ քսան տարիներ տեսչութիւն ընելէն ետքը, 1832 սեպտեմբեր 13ին և զինքը հոգեւոր հանդէսով թաղեցին Ս. Եկեղեցւոյ գաւիթը, տաճարին դրանը դէմը:

Մեր մեծաւոր Սրբազան Հօր մահունէն վերջը, քաղաքիս յարգելի իշխանները մեզի առաջարկեցին Վիճակիս հովուութեան պաշտօնը յանձն առնելու, որպէսզի կատարուի, ըսին, գիրքին ըսածը. որդին իր հօրը տեղը պէտք է փոխանակէ. սակայն մենք մեր անձին տկարութիւնը մէջ բերելով յանձն չառինք, ըսելով թէ կարողութեանս չափով մի միայն Ս. Ուխտիս կառավարութեան պաշտօնը կը վարեմ, փոքր ի շատէ Ս. Հօրմէս ուսած ըլլալով. այն ատեն մեզի ստիպեցին գէթ ժամանակաւոր կերպով փոխանորդութիւնը ընդունելու, մինչեւ որ արժանաւոր մէկը առաջնորդ ընտրեն, և այս մտքով Պոլիսէն կոնդակ բերելով՝ մեզի Սրբազան Պատրիարքին փոխանորդ կարգեցին:

Մեր փոխանորդութենէն ութը ամիսներ վերջը, Կ. Պոլսեցի Եփրեմ Ծայրագոյն վարդապետը Եւդոկիոյ Վիճակին առաջնորդ ընտրեցին. հոս գալով իր կարողու-

թեան չափով աշխատեցաւ մէկ քանի բարեկարգական խնդիրներով, որոնք տեսակ տեսակ սովորութիւններու երեսէն ներս սպրդած էին. օրինակի համար, հարսանիքներու անտեղի խարճազնացութիւնները, նաև քաղաքական հարկապահանջութիւնը, որ խղճալի ժողովուրդին վրայ ծանրացած էր: Մեծն Կ. Պոլիս գնաց և Դուռնէն հրովարտակ հանեց, որպէսզի փոքր ինչ մեղմացնէ հարկին ծանրութիւնը: Նաև ինքը գիտնական և ուսումնասէր ըլլալով՝ Ս. Վանուցս մէջ գեղեցիկ ու վայելչաձեւ ուսումնարան մը հաստատեց, ուր 15 մանուկներ գիտութեանց մէջ մարդուեցան, մէկ քանին ճարտասանութիւն սորվեցան, և ուրիշները ցրուելով իւրաքանչիւրը իրենց տեղերը գացին, որով ուսումնարանն ալ խանգարուեցաւ:

(Ահաւասիկ մինչեւ հոս այս պատմութիւնը գրեց նոյն խոհմընթաց բարեջան Գալուստ վարդապետը. ասկէ վերջի դէպքերը Ս. Ուխտիս միաբանութեան ջանքովը գրի առնուած են):

Եւ որովհետեւ քաղաքիս իշխանները որոնք համակիր չէին Եփրեմ վարդապետին, որուն համար անոր հինգամսայ տեսչութենէն վերջը (այսինքն 1838ին), Կ. Պոլիս դրեցին և առաջնորդութիւնը յանձնել տուին շնորհազարդ Գալուստ վարդապետին՝ առանց անոր հետ լան մը խօսելու և կամ խորհրդակցելու, որուն համար թէև փոքր ինչ նեղուեցաւ, բայց յետոյ ապաւինելով ամենուն յոյսը եղող Աստուծոյ, որուն զօրութիւնը տկարութեան մէջ կը կատարուի, հովուութեան պաշտօնը յանձն առաւ:

Եւ այնուհետեւ սկսաւ ամենայն հոգածութեամբ պարապիլ Քրիստոսի հօտին բարեկարգութիւնովը, աղքատները ողորմածութեամբ և մեծատունները քաղցրութեամբ մխիթարելով ամենքն Աստուած պաշտութեան կը յորդորէր, և մեծ սէր ունէր կարգ մը բարեկարգութիւններու: Իր երեւելի բարեկարգութիւններէն մէկը սա էր. — Մինչեւ այն ատեն մեր Վիճակին մէջ նոյնպէս և Հայոց բոլոր եկեղեցիներուն

մէջ, քահանաները հացագործներուն նման չատ մը նշխարներ կը գործէին և անխորժողովութիւն, կիներուն և տղայոց կուտային, որոնցմէ ալ ալլազգիներուն ձեռքը կ'իյնային, և ասկէ Ս. Հաւատքին դէմ չատ մը անվայել բաներ յառաջ կուգային: Այս շնորհազարդ վարդապետը, Վիճակին մէջէն այս սովորութիւնը վերցնել տուաւ և քահանաներուն պատուիրեց որ երեք նշխար միայն գործեն և երկուքը մասին հետ կտրեն, որպէսզի ամբողջ նշխարը դուրս չելնէ. թէ՛ եկեղեցականք և թէ՛ աշխարհականք հաւանելով գովեցին իր խոհականութիւնը:

Այս բազմաշխատ վարդապետս առաւելապէս Ս. Ուխտիս վրայ մեծ սէր ու գութ կը տածէր իր հոգեւոր ծնողին՝ Գէորգ եպս.ին նման. լուսահոգիին վախճանումէն հետքը Ս. Վանուցս մէջ չատ մը չէնքեր չինեց թէ՛ իր փոխանորդութեան և թէ՛ իր առաջնորդութեան օրովը, որոնցմէ կարեւորները հոս կը նշանակենք, ընթերցասէրներուն գիտցնելու համար:

Նախ Ս. Տաճարին գաւիթը չինեց, գմբեթաձեւ յարկով ծածկելով լուսահոգիին դամբարանին վրան: Երկրորդ՝ վարի ճէհրիլիքը՝ առաջուանին պէս արդիւնաւոր, որ լուսահոգիին ժամանակովը չինուած էր: Երրորդ, գեղեցկաչէն վերնայարկ մը՝ անոր վրայ չինելով երկու վայելուչ սենեակներ, և գեղեցիկ, բարձրահայտաց դստիկոն մը իւր զբօսարան միաբանութեանս: Չորրորդ, վարի կողմը վանքէն փոքր ինչ հեռու պարտէզ մը չինեց ընդեղէնի և բանջարեղէնի համար, որուն վրայ մեծ աւաղան մըն ալ չինել տուաւ, նորաչէն պարտէզը ջրելու: Աւելորդ կը սեպեմ հոս առաջ բերելու իր մասնաւոր հոգածութիւնը և այն շինութիւնները, ջրանցքը և ուրիշ կարեւոր իրերը, և մինչև հիմայ կ'աշխատի մեծ եռանդով Ս. Ուխտս բարեգարդելու իբր յաւերժական յիշատակ իր պանծալի գործունէութեանը:

Եւ որովհետեւ ժամանակին բերումով բազմավրդով նեղութիւններու և զբաղումներու խուժումները կը ծանրանային իր հովուական պաշտօնին վրայ, իրեն նիհար անձը չէր տոկար, որուն վրայ չատ անգամներ քաղաքիս երեւելիներուն և իշխաններուն ուշադրութիւնը հրաւիրած

էր. հուսկ ուրեմն թախանձանօք հաւանեցուց զանոնք երեքամեայ առաջնորդութենէն հետք թող տալ իրեն՝ հրաժարելու այն ծանր պաշտօնէն և կրկին անդրադառնալ սիրտապետ Ս. Ուխտիս բարեգարդութեամբը:

Միակամ, միախորհուրդ հաւցնութիւն տուին բերելու Մարգուստու գերահաւաքաւ Յակոբոս Սրբազան արքեպիսկոպոսը, որպէսզի իր Վիճակին հետ Եւդոկիոյ Վիճակն ևս հովուէ խոհմընթաց վարչութեամբ. որուն համար Ս. Պատրիարքին և Նորին բարձր Սրբազնութեան հետ նամուկագիր ըլլալով իրենց ինդքանքին կատարուած ընդունեցին:

* 1841ին մեր Հայրը՝ Ամենապատիւ Յակոբոս Սրբազան՝ իր պաշտօնատեղին հասաւ ճոխ ու երեւելի սպասներով: Եւ որովհետեւ այս մեր Հայրը վանքեր և եկեղեցիներ չինելու մեծ եռանդ ունէր, ուստի իր առաջնորդութեանը յաջորդ տարին այն է՝ 1842ին, Ս. Յովհան Ոսկեբերանի վանքին չինութեանը ձեռնարկեց և նորոգից զայն հիմէն, ուր կատուցանել տուաւ նաև հրաշակերտ տաճար մը, գեղեցկաչէն պարիսպներով և վայելուչ սենեակներով և բոլոր կաղամածներով. այս անթերի մեծագործութիւնը ի գլուխ հանեց իբր յիշատակ իր պանծալի անուանը:

Անկէ վերջ հետամուտ եղաւ ազգային բարեկարգութեանց և գիւղերու և քաղաքներու Ս. Եկեղեցիներու շինութեան. ուր որ քայքայուած եկեղեցիներ կային կամ բնաւ չկային առաջուրէն, այսպիսի տեղեր պայծառ ու փառաւոր եկեղեցիներ հաստատեց: Ահաւասիկ եօթը տարուան միջոցին մեր Վիճակին մէջ չինուած եկեղեցիները հոս կը նշանակենք: Նախ Պիւսկիւնճիւք գիւղի եկեղեցին, ապա Բաղաքամիջի Ս. Երրորդութիւն, Կէտաղաղի եկեղեցին, Գրիգորիս և Էնտիզ գիւղի եկեղեցիները:

Իսկ 1848 տարւոյն մէջ այս Ս. Վանքիս մէջ յոյժ փառաւոր և բարեկարգ ուսումնարան մը չինեց: Եւ երբ ազգին լըրութենէն Պատրիարքական Խթողը հրաւիրուեցաւ, իրեն փոխանորդ կարգեց Եւդոկիոյ Վիճակին՝ մեր շնորհափայլ Ս. Հայրը՝ Գալուստ ծայրագոյն վարդապետը. աւոր և բոլոր իշխաններուն պատուիրեց, որ Ուսումնարանին պայծառութեանը հոգածու գտնուին: Եւ ինքր Մեծն Կ. Պոլիս գնաց և 1848ին Պատրիարքական Աթոռը նստաւ:

ՕՏԱՐ ԷՁԵՐ

Վերացման Խաչի տաղաւարը վերջինն է տարւոյն հինգ տաղաւարներուն, եւ յառաջիկայ երկուշաբթին վերջին Մեռելոցը. Նախորդ թիւի մը մէջ Մեռելոցի մեր համեստ տաղաւորութիւնները ներկայացուցած էինք, փորձելով ցուցնել մեռեալներու հանդէպ յարգանքին մեծ նշանակութիւնը՝ ազգերու քաղաքակրթութեան տեսակէտով, եւ կրօնքին վստի՞ղ դերը՝ վշտակոծ սրտերը սփոփելու մէջ։ Այսօր առիթը ունինք ներկայացնելու ֆրանսացի նշանաւոր գրողի մը՝ է. Տոմէրկի Սեղծագործութիւնն եւ քաղաքացիները գործէն հոյակապ հատուած մը, մեռեալներու հանդէպ յարգանքին խորունկ նշանակութեանը վրայ։ Հեղինակը քննել է հորը զանազան կարեւոր փրօղութիւններ, որոնք կը հաստատեն մարդկային ստեղծագործութեան աստուածաշնչական պատմութիւնը, կը շարունակէ։—

ՕՏԱՐԿԱՆԻ ԿՐԾՆԱԳԻՆ

... Եւ սակայն նոյն իսկ իմացականութիւնը չէ տակաւին այն յատկանիշը որ մարդը կը բաժնէ անասունէն, որ մարդը կը միացնէ Աստուծոյ, Բան մը կայ որ, առաւել քան բանականութիւնը, յատկանիշն է միմիայն մարդուն. հաւատքն է այն։ Եւ յիշուի, գիտական հետազոտութեանց երրորդ եւ վերջին արդիւնքն է ասիկա.— Նախնական մարդը կրօնաւէր է։

Մէկգի թուով այն բովանդակները որոնք այնքան առատօրէն գտնուած են, կ'ըսուի, ուղղակի յառաջ կը բերենք նախնական մարդուն կրօնական զգացմանց մեծ ապացոյցը։ Այդ ապացոյցը գերեզմանն է։

Մարդը անասուն մ'ըլլայ։ Այն գիտուններուն որ մեղի կը խօսին կրօնական զգացումով օժտուած անասուններու վրայ, որ մեղի կը ճառեն շանը քարեպաշտիկ երկիւղին վրայ, փիղին ջերմ հաւատարմութեան վրայ, կրնանք հարցնել թէ ի՞նչ իրաւունքով եւ ո՞ր տրամաբանութեան անունով կը համարձակին խօսիլ մեղի ժամանակակից կամ նախապատմական մարդուն կրօնք չունենալուն վրայ։

Բայց, իրապէս, ո՞ւր են մարդուն նման՝ կրօնական զգացումով տոգորուած անասունները։ Գիտուններ, որոնցմէ ոչինչ

կը խուսափի, ցուցուցէք ուրեմն մեղի փոս մը զոր արջ մը փորած ըլլայ ուրիշ արջ մը թաղելու համար. ցուցուցէք մեղի վերջին բնականը զոր մամուլը պատրաստած ըլլայ մամուլին համար, ցուցուցէք մեղի շիրիմ մը զոր եղջերու մը կանգնած ըլլայ ուրիշ եղջերուի մը համար։ Մէկգի՛ կատակը՝ այսքան մահաշուք, բայց միեւնոյն ատեն այսքան վստի՞ղ նիւթի մը մէջ։

Մարդն հազիւ թէ կեանքի մէջ մտած է, եւ արդէն մահուան վրայ կը խորհի։

Մեթիքի եւ այրուած ոսկերճութիւններու խաւի մը վրայ նախամարդը տարածուած է իր պարագաներուն կողմէ, չըջապատուած իր զէնքերով՝ շարունակելու համար իւր ստորութիւնները։ Իր շուրջը դրուած են նաեւ այն առարկաները, որոնցմով կը սիրէր զարդարուիլ կամ զորոնք կը գործածէր. որովհետեւ միւս կեանքը շարունակութիւնն է այս կեանքին։ Յետոյ ողջ մնացողները կ'ընեն վերջին ծիսակատարութիւնները, որոնց գոյութիւնը կը հաստատուի մոխիրներէն, խնճոյքի ոսկերճութիւններէն եւ ոսկորներու գունաւորումէն։ Յետոյ քարայրին մուտքին վրայ խոշոր քար մը կը գլորեն ու կը հեռանան։

Ողջունենք այդ պերճաստուեր քարը. ատիկա այն քարն է զոր կը գլորենք տակաւին մեր սիրելիներուն վերջին հանգրստարանին վրայ, ցուցնելու համար թէ մահը աւելի՛ անզօր է անոր տակ հանգչողին վրայ, քան ժամանակին անզօրութիւնը՝ զայն ծածկող մարմարիտին վրայ, անմահութեան խորհրդանիշը մեր գերեզմաններուն, որոնց կը համապատասխանէ նախապատմական դարերու քարայրին խորհրդանիշն անմահութեան։

Այո՛, ողջունենք այդ պերճաշուք քարը. որովհետեւ ան է որ իր կրանիդին անխորտակելիութեան վրայ—իրեւ միակ հիմի մը վրայ—կը կրէ մարդկութեան բազմապատիկ կրօնքները, յղեւած քարի դարէն մինչեւ ամէնէն աւելի ստորնացած վայրենիի դարը, զոր կը փորձեն մեղի ցուցնել իբրեւ ամէնէն վուերական ներկայացուցիչը նախապատմական մարդուն։

Եւ այսօր, այդ քարը կ'ուզեն տապա-

լե՛ր...: Երկրագունտին յեղաշրջումներն անցեր են անոր վրայէն առանց հետք ձգելու, և մեր դարուն թերահաւատութիւնը կը յուսայ որ իր ալիքներն աւելի՛ զօրաւոր ըլլան, քան նոյն ինքն ջրհեղեղային փոթորկներու կոհակները:

Յիմարութիւն և անկարողութիւն...

Որովհետեւ այսուհետեւ մէկը կայ որ կը պահպանէ այդ քարը. այնպիսի մէկը որուն ուժը կարելի չէ ուրանալ: Որովհետեւ այսուհետեւ նոր դարու Գիտութիւնն է որ կանգնելով վաղընջական քարայրին մուտքին առջեւ, ու մէկ թեւը կը թնցուցած այդ հսկայ քարին վրայ և միւսը դէպ ի երկինք բարձրացուցած, իր որոտալից և սակայն ամենալուրջ ձայնով կը գոչէ մեր սերունդին...

Կրօնքը ո՛չ ժամանակէն կախում ունի և ոչ տեղէն: Յորմէհետէ մարդ մը գոյութիւն ունեցած է, ուր որ ալ գտնուած ըլլայ մարդ էակը, կրօնք մ'ալ գոյութիւն ունեցած է, միշտ և ամէն տեղ, բեւեռի սառնարաններուն վրայ թէ Ափրիկէի կիզիչ արեւուն տակ, նսեմաստուեր անտառներուն մէջ թէ Ովկիանոսի լերկ ծովափին վրայ...: Անաստուած ժողովուրդները գոյութիւն ունին՝ միայն ազիտութեանը կամ կողմնակալ ոգիին համար անոնց որ կ'անտեսեն ամէնէն լուսամիտ ճամբորդներու և ամէնէն անկողմնակալ գիտուններու հաստատած նորագոյն իրողութիւնները: Միշտ և ամէն տեղ այս է օրէնքը:

Այնպէս որ կրօնքի գոյութեան դէմ յարձակիլ, օրէնք մը բռնադատել ուզել կը նշանակէ: Կրօնքը կործանելը անշարժութիւնը կամ ծանրութիւնը կործանելու պէս բան մը պիտի ըլլար:

Հետեւապէս, յանուն այս գերեզմանին, զոր կը յարգեն քաներորդ դարու Բարիզցիք և յղկուած դարաշրջանի մարդն հուսարապէս, այսինքն յանուն իրողութեանց, յանուն գիտութեան, յարգանք կրօնքին...:

Թարգմ. ՋԱՐՈՒՅՐ ՔՀ.

Է. ՏՈՒՄԵՐԿ

ՄՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

Խաչին փառաբանութեան, Խաչին յաղթանակին նուիրում շարքու մը մէջ հոգեկան վայելք մը պիտի ըլլայ ճշմարիտ Բրիտանիային համար՝ հանգուցեալ Մելիսեդեկ Արքեպ. Մուրատեանցի սրացունց ֆերբուածը՝ «Լոս'չ, օգնեա՛ ինձ», որմէ հազիւ անցան, անջիդ պատահիկներ կտելի կ'ըլլար հրահրաւիչ՝ յոնակալութեան օրհրոն՝ Հաջնոսիր Բաղուածներու մէջ, եւ որուն ամբողջութիւնը՝ իր անեսարանաշունչ բարձր գաղափարականով՝ խորունկ խոկումներու մէջ պիտի սուզէ հաւատացեալը:

ԽԱԶ, ՕԳՆԵԱ՝ ԻՆՁ

Նուէր ծնողասէր մանկանց.

Որոհանիս մօտը նստած՝
Մայրս անուշ երգելով՝
Ինձ շատ անգամ ֆուն էր արած՝
Խաչանջան կնկելով:

Աջն ու Խաչը քեզ պահապան՝
Անքիւ անգամ կրկնէր էր.
Խաչն իր սիրոյն միշտ ապաստան՝
Ամեն ժամուն կանչէր էր:

Երբոր քոքով շեզուս բացաւ՝
Խաչի դասն աւանդեց.
Խաչ, օգնեա՛ ինձ, կրկնիր ասաց՝
Գրոտ սիրով պատուիրեց:

Բանի տարի ես սիրուն դասն՝
Ես շարունակ կրկնեցի,
Մօրս հետք ժամ գնացի,
Խաչելութիւն սիրեցի:

Ուխտասեղի քե մասուններ
Ուր որ ես ուխտ գնացի,
Հանքուրեցի ես խաչաբեր՝
Խաչ, օգնեա՛ ինձ, կրկնեցի:

Երբոր փոքր ինչ ես մեծացայ՝
Մայրս տուա ֆերական,
Խաչ, օգնեա՛ ինձ, կրկնի՛ր, ասաց,
Խաչն է ուսման օգնական:

Խաչն օգնական ինձ կանչելով՝
Այրուրեմեմն սխալ,

Ամեն դասում միշտ կրկնելով՝
Շուտով կարդալ սորվեցայ:

Քերականն աւարեցի
Յետոյ մտայ փառմարան,
Եօքը արի եւ կարդացի,
Ուսմունք առի զանազան:

Քանի՛ յանի՛ շարագրածներ,
Որ եւ ինձէն գրեցի,
Դեռ չսխառ՝ ճակատներն՝
Խաչ, օգնեա՛ ինձ, դռնընեցի:

Աստուածաշունչ, Աւետարան
Որչափ սիրով կարդացի,
Այնքան ասիլն սիրոյ նշան
Մոտիւ մեզը զգացի:

Զգացի որ ասիլն ճառը
Մեծ ուսմունք է մարդկութեան,
Մեր փրկութեան դրօշն է նա,
Ճշմարտութեան սուրբ նշան:

Զգացի որ նախասանկով՝
Գողգոթայում ճկուեցաւ,
Բայց եւ յետոյ անհուն փառքով՝
Դմբեքներում փայլեցաւ:

Զգացի որ նա է բաժին
Ազատութիւն զոյողին,
Նա է կենաց անձուկ ուղին
Ճշմարտութիւն սիրողին:

Ազատութիւն, Ճշմարտութիւն,
Նրան ծնունդ երկունորեակ,
Խաչն է նրանց ոյժ, զօրութիւն,
Անէրութեան մայր դայեակ:

Զգացի որ երկունք ասիլն
Ծանր է քան ցաւ ծնող մարց,
Բայց եւ ծնունդն արի, ուժգին,
Եւ ոչ որպէս հեգ կանանց:

Զգացի որ առանց ասիլի
Զրկայ վշտից սիրտիս,
Ո՛չ աճումն ազատ մտքի
Եւ ոչ պատկ յաղթանակ:

Զգացի որ առանց ասիլի
Ճշմարտութեան սեր չը կայ,

Եւ ո՛չ կանգնումն ընկած ազգի
Ո՛չ կեանք, ոչ յոյս մշտակայ:

Զգացի որ ասիլն Աստուած
Սիրոյ համար ասիլն շաղկեց,
Մարդկանց սիրով ասիլն գրեց՝
Խաչ վեր առնուլ փառքեց:

Զգացի որ ասիլ կայ պատրաստ
Ամեն մարդու առաջին,
Ով կը ցանկայ յինի զգաւս
Ձեռն գնալ մեր Փրկչին:

Զգացի որ եւ էլ ունիմ
Իմ յատուկ խաչն աշխարհում,
Որ անհրաժեշտ պիտի լինիմ
Սիրով ամեն դիպումսում:

Խաչ կայ մարդուն իւր կրօնից,
Խաչ ամեն տեղ, ամեն ժամ,
Խաչ կայ՝ անհուն ստիքներից,
Դաւ, հալածանք յարածամ:

Խաչ կայ Կենաց աղետներից՝
Խաչ բնական դիւրասար,
Խաչ կայ՝ մասնից Յուդաներից՝
Խաչ դժուարին ծանրասար:

Խաչ կայ՝ անմիտ զգեսներից
Իմաստասէր հանճարին,
Խաչ կայ՝ աշխարհ պաշտողներից՝
Աշխարհի հետ մեղողին:

Խաչ կայ խառն յամառներից
Լոյս որոնող մեկերին,
Խաչ բարբարոս իշխողներից՝
Դերութեան լուծ ասողին:

Խաչ կայ՝ անշարժ քոյր վաճարից՝
Յառաջադիւն ձգտողին,
Խաչ կայ՝ մոլոր կարծիքներից,
Ճշմարտասէր յիշգրտին:

Խաչ կայ նեղագոն խարդախներից՝
Պարզ եւ ուղիղ սրտերին,
Խաչ կայ ստուկ ոգիներից՝
Պարս Իրաւունք խնդրողին:

Զգացի որ քսան խաչերն
Էն ասիլի մօտ ոչինչ են,
Որ մարդասէր գոն Տէրն
Բարձաւ Իւր ուսն հեգօրեն:

Նա եւ սիրոյ անհուն նշան,
 Խաչեալն Սեր գիտովին.
 Սիրոյսանաց մեծ ապաստան
 Սիրով իւր Խաչ բարձրողին:

Զգացի որ Փրկչի Խաչն եր
 Որ օգնական ինձ կոչեց,
 Երբոր մայրս հեզ, որդեւեր,
 Խաչ, օգնեա՛ ինձ, դաս տուեց:

Քանի՛ քանի նեղութիւններ
 Որ իմ առջեւ յուրս եկան,
 Միսս քերի մօրս պատուեր
 Կոչեցի Խաչն օգնական:

Քանի՛ քանի՛ հեշտութիւններ,
 Որ ես ինձեկ գրկեցի.
 Թափեցի յորդ արսասուններ
 Խաչ օգնեա՛ ինձ, գոչեցի:

Վիշտ ու վստօց փառսեցան,
 Զգացի մեծ սիրոյսան.
 Բոլք փոքորիկ կուսակեցան,
 Անցի մեղեկ անվստօց:

Օրհնութի՛ քո զերեզմանն
 Որդեկանս մայր գրոս,
 Որ դու Խաչի փրկարար դասն
 Ուսուցիր ինձ հաւատոս:

Թե՛ որ մանուկ քարն հասակես
 Խաչի սերն չազդէիր,
 Ի՛նչպէս պիտի զինեի ես
 Մըրկաց մեջ անվեհեր:

Թե՛ որ Խաչի անյաղք ոյժն՝
 Ինձ յարածաւ չսիրէիր,
 Ի՛նչպէս պիտի սանեի ես
 Սոս անիրաւ գրկաններ:

Մա՛յր իմ, դասդ չեմ մոռանալ,
 Քանի՛ որ ես կենդան եմ,
 Նեղութեանց մեջ չեմ բռնանալ,
 Խաչն ինձ պարծանք կ'անուանեմ:

Ուրախութեամբ ես կը սանեմ
 Ասեկ գրկանք, ասեկ խաչ,
 Քանի՛ սիրով ես կը սեւեմ,
 Փրկիչն՝ ի խաչ բարձրացած:
 Պ. Մ. (Մ. Ս. Մ.)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ս Յ Զ Ա Յ Ն Ա Գ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

(Շար. նախորդ բիւլեն)

Նիկողայոս Թաշճեան ծնած էր 1841ին Սասգիւղ, և տեղւոյն Ներսէսեան վարժարանին մէջ ուսած էր Հայկական և Եւրոպական ճայնագրութիւնները Դարբիէլ Երանեանէ, որուն զօրավիգն եղաւ 1861ին «Քնար Հայկական»-ի հրատարակութեան աւտէն: Նոյն տարին ընկերակցութեամբ իր եղբոր՝ Յակոբ Թաշճեանի (այժմ դասախօս Արեւ. ու Եւր. նուագարանաց) հրատարակած է նաեւ կիսամսեայ թերթ մը «Նուագ Օսմանեան» անունով: Գարբիէլ Երանեանի մահունէն յետոյ (1862), Երաժշտական ընկերութիւնը փափաքելով՝ որ չղաղբի հանգուցելոյն օգտակար ձեռնարկը, նոր մղում տալու համար, նոյն տարւոյ Գեկտ. 21ին ներկայացում մը կազմակերպեց Արեւելեան թատրոնին մէջ՝ ի յիշատակ Դարբիէլ Երանեանի և ի նպատակ «Քնար» հանդէսի, որով կարողացաւ քիչ մը աւտէն ևս շարունակել պարբերականը, բայց 1863ին վերստին դադրելով՝ նոյն տարւոյ Օգոստոսին Թաշճեան սկսաւ աւտանձին շարունակել, որ քանի մը ամիս յարատեւեց: 1864ին Տէրոյնեց տպարանէն լոյս ընծայեց «Նոր երգեր» անուն ճայնագրեալ տեարակ մը: Բայց ինչ որ իր անունը պիտի անմահացնէր, 1875ին Վաղարշապատի մէջ տրպուած ճայնագրեալ Շարականն էր՝ 1100 էջերէ բաղկացեալ, ինչպէս նաեւ Ս. Պատարագի երգեցողութիւններն ու եկեղեցական ճայնագրութեան դասագիրքը՝ որոնց վրայ պիտի խօսինք:

1873 թուականին Ամենայն Հայոց Հայրապետ՝ Գէորգ Դ. Կաթողիկոս կը հրաւիրէ զԹաշճեան իր մեծ նպատակը գործադրելու համար, որ էր ամբողջ շարականը ճայնագրել տալ: Նոյն միջոցներուն Թաշճեան գործօն անդամակցութիւնը կը վարէր Ղալաթոյ Խորհրդարանը կազմուած Երաժշտական Յանձնաժողովին, յորում բուն պայքարներ մղած էր ընդդէմ Արիստ

տակէս Յովհանէսեանի և Եղիա Տնտես-
եանի։ Այս հրաւերն ստանալով Նիկողա-
յոս, պարտաւորուեցաւ իր պաշտօնը և
Մասնաժողովոյ անդամակցութիւնը թողով
մեկնիլ Էջմիածին, ուր երկու տարի շա-
րունակ Գէորգեան ձեռնարանի մէջ դասա-
խօսելով Հայ. ձայնագրութիւնը ըստ բա-
ւականին սորվեցուց իր աշակերտաց, որոց
մէջ առաջնակարգ հանդիսացաւ Մակար
Եկմալեան (1856—1902)։ Միեւնոյն միջո-
ցին կը շարունակէր ձայնագրել Շարական-
ները՝ նախապէս Տիրացու Կարապետի և ապա
Մանկունի Տ. Վահրամ Արքեպ.ի գործակ-
ցութեամբ (տես գլուխ Գ.)։ Մեր Ազգը
շատ երախտապարտ պէտք է ըլլայ Գէորգ
Գ. Կաթողիկոսի, որ Հայ ձայնագրութիւնը
օժտեց իր հրատարակած հսկայ գործերով,
առանց որոյ այսօր չպիտի ունենայինք
տպագրեալ եզանակներ. ուստի օրհնու-
թեամբ պէտք է յիշատակենք անոր անունը՝
որ այսպիսի մեծագործութեամբ մը պատ-
ճառ եղաւ որ հայ ձայնագրութիւնը մոռա-
ցութեան չդատապարտուի։

Թաշճեան՝ Ս. Էջմիածնայ վանուց մէջ
ձեռնարկած փառաւոր գործն աւարտելէ
յետոյ՝ դարձաւ հայրենիք և Մայր Եկե-
ղեցոյ Դպրաց Դասուն հրաւերով ստանձ-
նեց երաժշտապետութեան պաշտօն 1879ին։
Երիտասարդ հասակէն սկսեալ ուսուցչա-
կան ասպարէզն ընտրած էր, որ միակ և
սիրելի զբաղումն եղաւ մինչեւ վերջը.
անխորի կ'այցելէր գրեթէ Պոլսոյ բոլոր
թաղերը, իր դիւրահաղորդ բնաւորու-
թեամբ և կենցաղագիտական վարմունքով
համակրելի ըլլալով ամենուն։ Իբր գրական
մարդ՝ բաւական յօդուածներ ունեցած է
1864ին հրատարակուող «Ժամանակ» պար-
բերականին մէջ, որուն խմբագիրն էր Ստե-
փան Փափաղեան (1839—1888)։ Իր եր-
գերուն մեծագոյն մասը հեղինակած է Սա-
մաթիոյ Ազգայեան վարժարանին մէջ պաշ-
տօնավարած միջոցին՝ 1870ական թուա-
կաններուն, մէկ մասն ալ զանազան թա-
ղերու մէջ մրցանակաբաշխութեան հան-
դէսներու աւթիւ. մնացեալները կը վերա-
բերէին Ազգ. Սահմանադրութեան տարե-
դարձի և բարձրաստիճան անձնաւորու-

թեանց ձօնեալ ուղերձներու, որոց մէջ
կարեւոր տեղ մը կը բռնէ Ներսէս Վար-
ժապետեանի ուղղեալ «Ելէ՛ք եղբարք բո-
լորուելու» գեղեցիկ ձօնարէր՝ զոր գրած
է Զէյթունցի հերոս-բանաստեղծ Յարու-
թիւն Զաքրբեան (մեռած 1899ին)։ Ունի
նաեւ բազմաթիւ «Ամէն և ընդ հոգւոյդ
քում»ներ, «Տէր ողորմեա»ներ և «Ամէն
Հայր սուրբ»ներ՝ զուտ եկեղեցական տա-
մուռքով յօիինուած։

Արդէն ըսած ենք թէ մեր ուսուցիչները
որքան ալ մեծ ծառայութիւններ մատու-
ցած ըլլան ազգին, մինչեւ ցմահ չեն վա-
յելիւր պէտք եղած յարգանքը։ Կը պատ-
մեն թէ Թաշճեան, հիւանդ ամուսնոյն քով
սպասելու հարկադրուած, քանի մը ան-
գամ կ'ուշանայ որոշեալ ժամանակին ներ-
կայ գտնուելու Մայր վարժարանի դասա-
խօսութեանց. խստապահանջ հոգարարձու-
ները՝ ամսականը վճարած ատենին առար-
կելով թէ քանի մը ժամ բացակայ գըտ-
նուած է իր դասերէն, իբր տուգանք՝ կա-
րուոր գումար մը կը զեղչեն. «Սակայն—
կ'ըսէ Թաշճեան վշտացած — այդ բացա-
կայութեանս ժամերը զուարճութեան կամ
զբօսանքի յատկացուցած չէի, ո՛ր հիւան-
դութեամբ տառապող կնոջս հարկ եղած
ծառայութիւնը մատուցանելու համար էր
որ ուշացայ», որուն կը պատասխանեն
ցրտութեամբ, «ինչ որ ալ ըլլայ այս է մեր
օրէնքը»։

Թէ ո՛րքան դուռնութեամբ լեցուած էր
բազմադիւն ուսուցչին սիրտը՝ լսելով այս
անգութ խօսքերը որ կ'ուղղուէին, իրեն ա-
ռանց նկատողութեան առնելու երեսնամեայ
ծառայութիւնները, այդ չինք կարող դու-
շակիլ. ինչ որ գիտենք սա է թէ նոյն
գիշերը հոգին կ'աւանդէր Թաշճեան՝ ջանա-
կարծական տկարութիւն մը զգալով, թէ և
քաջառողջ վիճակի մէջ եկած էր դպրոց։
Ահա այսպիսի անակնկալ մահուամբ մը վեր-
ջացաւ 1885ին՝ այս անխոնջ աշխատաւո-
րին կեանքը, հազիւ 45 տարեկան, մինչ-
դեռ իր արտաքին երեւոյթը ցոյց կուտար
թէ երկար տարիներ ապրելու սահման-
եալ է։

Հանգուցեալը ամուսնացած էր 1869ին

Վասիլուհի Մըսրըլեանի (քննի Ստեփան Փափուզեանի) հետ, որմէ ունեցած էր երեք աղջիկ զաւակներ: Իսկ իր բազմաթիւ աշակերտաց մէջ առաջնակարգ հանդիսացած են Արամ Բժշկեան (մեռած 1908ին,) Գրիգոր Մէհտէրեան, Ռուբէն Ծիվանեան և Գրիգոր Զուլհանեան:

* * Իրմէ 2 տարի առաջ մեռած է (1883) Յարութիւն Համբարձումեան (յետոյ Տ. Յարութիւն քննի) որ ծնած էր 1803ին: Սա քննի Պալաթցի ըլլալով՝ խիստ հաւաւակած էր Մինէճի տիրացու Յովհաննէսի աշակերտած ըլլայ: Յարութիւն բաւական հմուտ էր Հայ ձայնագրութեան, թէև յայտնի չէ թէ որմէ՞ ուսած էր. բնաւորութեամբ երկչոտ՝ չէր համարձակեր յատենի եկեղեցւոյ ձայնագրութեամբ կարգալ, վախճանով որ այդ արուեստին հակառակող դպիրները մի գուցէ դատապարտեն զինքն ալ՝ ինչպէս հալածած էին իր նախորդները. ուստի միայն իր տան մէջ՝ գրեթէ ծածուկ կ'աշխատէր Համբարձումեան ձայնանիշերը լաւ կերպով ըմբռնելու:

Մինէճեան Յովհաննէսի մահուանէն վերջը (1842) զինքը կարգած են դպրապետ Պալաթու Ս. Հրէշտակապետ եկեղեցւոյն, ուր երկար տարիներ պաշտօնավարելէ յետոյ՝ ծերունի վիճակին մէջ (74 տարեկան) քահանայ ձեռնադրուեցաւ 1877ին՝ Պէշիկթաշի եկեղեցւոյն վրայ: Շատ կարճատեւ եղաւ իր քահանայագործութեան շրջանը, հազիւ 6 տարիի չափ, և 1883ին վախճանելով՝ Բուսէլի Հիսարի գերեզմանատան մէջ թաղուեցաւ:

Իր որդւոյն՝ Քէմանի Համբարձումի քով տեւեցած է հօրմէն ժառանգ փնտցած տետրակ մը, որ Լիմօնեանի հեղինակութիւններէն՝ 17 տարբեր եղանակաւ «Յարեալ Քրիստոս»ներ և քանի մը հին Մեղեդիներ կը պարունակէ. (Կենսագրութիւն Հայ Սրաժտաց. Յովհաննէս Շալճեան):

* * Բանի մը տարի վերջ (1891) մեռաւ նաև Հայոց Կիլիկիայէրկն համարուող Յովհաննէս Միւհէնտիսեան, որ ամենամեծ պաշտպանն ու սատարողն եղած էր Հայ ձայնագրութեան:

ԱՐԻՍԱԿԷՍ ՔԷ. ՀԻՍԱՐԷԱՆ

(Շաբուակեղի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԻԼԻԿԵԱՆ ՀՈԳԵՐ


Կիլիկիան, աւերի ու աւարի մատնուած այդ երկիրը, ենթարկուած ահաւոր աղէտին հետեանքներէն վերջապէս աղատուելու համար մեծ ջանքերու պէտք ունի տակաւին: Պետական խոստացուած նպաստին առաջին մասնավճարը՝ 10000 ոսկի՝ շատ ի գէպ եկաւ այնպիսի ատեն մը՝ երբ նպաստի աղբիւրները ցամաքելու վրայ էին գրեթէ, և վերահաս ձմեռը առաւել քան երբեք հարկեցուցիչ կը դարձնէր ստիպողական կարգադրութիւններ: Միւս կողմէ որբախնամ գործի մասին դժգոհութեան ձայներ կը լսուէին, և լուր կը տրուէր թէ Կիլիկիոյ վեց որբանոցներու հինգին տնօրէնները բողոքական են: Կը գրուէր նաև Լատիններու և Բողոքականներու կողմէ մարդորսութեան, նպաստի բաշխման մէջ եղած աչառութիւններու վրայ: Անշուշտ այս բողոք տարածայնութիւնները ի նկատ առնելով է որ Քաղ. Ժողովն անցեալ ուր. օրուան նիստին մէջ զբաղեցաւ զլիաւորաբար Կիլիկիոյ որբանոցներու, և այրի կիներու գործ հայթայթելու համար կազմուելիք յանձնաժողովի խնդրով: Որբախնամին կողմէ Հեթում էֆ. Սէթեան ներկայանալով ուղեց տեղեկանալ Վարչութեան որոշման ի մասին Որբախնամի պաշտօնին շարունակութեան, որովհետև յառաջիկայ տարուան համար կարգադրութիւններ ըրած և ընելու վրայ է: Քաղ. Ժողովը բացաարեց թէ Որբախնամին պաշտօնը վերջացած չէ և այդ իմաստով եղած հրատարակութիւնները թիւրիմացութեան արգելիք են. միայն թէ Կիլիկիայէն վերադարձող վարչական պատուիրակ Սուլին էֆ. ի յայտնած կարծիքին համաձայն, պիտի նուազեցուի որբանոցներու թիւը և որբերէն անոնք որ գոնէ մայր մ'ունին, պիտի վերադարձուին իրենց մօր քով. այդ պարագային գործ պիտի հայթայթուի այրի կիներուն, Պետական նպաստին մէկ մասն ալ յատկացուելով ատոր: Այլատանոցները կազմակերպուելու

և զբաղումները որոշելու համար անջատ յանձնաժողով մը պիտի կազմուի. որուն չպիտի մասնակցին բնականաբար Որբախնամի անդամները որոնք իրենց առանձին գործն ունին: Որբախնամին մէջ երեք բողոքական անդամ գտնուելով, Հայ-հոռոմէականաց պատրիարքին կողմէ ներկայացուած երեք անդամներ՝ Յովհաննէս պէյ Խորասանճեան, Գրիգոր էֆ. Հալէպիեան և Յակոբ էֆ. Գալաֆեան՝ անդամ կարգուեցան Որբախնամին: Ասոնց ևս հաւաքական խորհրդակցութեամբ պիտի կատարուին որբանոցի յառաջիկայ շրջանին կարգադրութիւնները: Սկզբամբ որոշուած է որբանոցներն երեքի իշեցնել. որովհետեւ վեց որբանոցներու նիւթականը չի կրնար հոգաւ ազգը, և պետական նպաստէն ուրիշ հասոյթ չկայ գրեթէ:

Իսկ աշխատանոցներ բանալու համար կազմուած է ինը հոգիէ բաղկացեալ յանձնաժողով մը, որուն անդամներն են Տեարք՝ Խաչիկ Խորասանճեան, Եղուարդ Շիրինեան, Տիգրան Մանուկեան, Յակոբ Պոյաճեան, Տիգրան Իսպէշէրեան, Գառնիկ Յովակիմեան, Դաւիթ Տ. Մովսէսեան, Օ. Ճիւլաճեան (հայ բողոքական) և Գ. Մալխաս (հայ հոռոմէական): Այս մարմինը Կիլիկիայէն եկած տեղեկագիրները կարդալով պիտի խորհրդակցի թէ ո՛ւր աշխատանոցներ պէտք է հաստատել և ի՞նչ տեսակ գործերու համար: Տեղ կայ ուր գորգագործութեան մշուժ կրնայ տրուիլ, տեղ կայ որ եաղմա չիւնելու, կտաւ պատրաստելու համար և այլն: Այս մանրամասնութիւնները ճշտուելէ ետքը, պիտի խորհուի թէ ի՞նչ կերպով և որո՞նց միջոցաւ կրնան հաստատուիլ այս գործերը, որոնք արհեստին տեղեկ մարգոց պէտք ունին, արդիւնք յառաջ բերելու համար:

Նիւթականի լարելաւութիւնը ամենամեծ դեր ունի բարոյականին և հոգեկանին վրայ: Հետեւապէս կը յուսանք որ Կիլիկիոյ ժողովրդեան նիւթականին համար եղած այս կարգադրութիւնները բարեբար դեր մը պիտի ունենան կասեցնելու մարդորաներու շահատակութիւնը, որոնց դէմ սակայն հոգեւոր իշխանութիւնը անհրաժեշտ է որ փութացնէ լուրջ միջոցներու

կիրառումը: Կիլիկիան հազիւ մէկ քանի թեմեր ունին իրենց առաջնորդը կամ հոգեւոր հովիւը. մինչ բաղամթիւ քաղաքներ ու գիւղեր զուրկ կը մնան հոգեւոր մխիթարութենէ և սուրկայ են օտարադաւաններու ազդու բրօքանկանտին: Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը անշուշտ ջանադիր է ժողովրդեան պէտքերը հոգալու. և սակայն ամէնէն զօրեղ նկարագրին ճիգերը կը մնան ապարդիւն, երբ օժանդակող կարող ձեռքեր կը պակսին իրեն: Անձնուէր հոգիներու պէտք կայ, ուրեմն, իբրեւ շրջուն քարովիչ այցելելու համար Կիլիկիոյ այդ անտեսուած թեմերը: Ազգ. Վարչութիւնն և Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը, տուաւ քան երբեք համերաշխ և միախորհուրդ, այս պէտքին գոհացում տալու միջոցները ձեռք առնելով ստիպողաբար, կը կարծենք թէ Կիլիկիոյ ցաւին հիմնական դարմանն է որ ի գործ դրած կ'ըլլան:



ՄՇՈՅ Գոմա գիւղի աղաներէն Իպրահիմ, իր մէկ քանի ազգականներուն քանի մը տարի առաջ յեղափոխականներէ սպաննուելուն առթիւ, Շէյխ-իւլ-Իսլամութեան արտօնութեան վրայ, դատի ձեռնարկած է Շէրիի դատարանին առջեւ, պահանջելով որ սպանութեան հեղինակները դատապարտուին իբր ոճրագործ՝ և տրուած վրձիւնը՝ ըստ Շէրիի՝ իրենց ուղած եղանակով գործադրուի: Սզգ. Վարչութիւնն անցեալ չարթու զբաղեցաւ այս խնդրով և նկատելով որ Սահմանադրութենէն վերջ քաղաքական յանցանքով դատապարտուածները ներման արժանացած են, որոշեց պատկանեալ իշխանութեան դիմում ընել, դատը անհետեւանք ձգելու համար: Յուսով իմացաւ նաեւ որ Շէյխ-իւլ-Իսլամութեան կողմէ դատի չարունակման արտօնութիւն տրուած է, եւ որոշեց թագրիր մը ուղղել Շէյխ-իւլ-Իսլամին, ուր պիտի շեշտուի թէ քանի որ Շէյխ-իւլ-Իսլամութեան կողմէ քանի մը քիւրտերու սպանութեան համար ոճրին հեղինակներուն դէմ դատ վարելու սկզբունքը կ'ընդունի, Ազգ. Պատրիարքաբանն ալ պէտք է դատախազ կանգնի այն

ոճրագործներուն դէմ, որ Համիտեան շրջանին Անատոլուի մէջ 300,000, և Սահմանագրութենէն վերջն ալ Ատանայի մէջ 20,000 անմեղ Հայեր ջարդեցին:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ, Ծնունդ Ս. Աստուածածնոյ տօնին առթիւ, փոխանակ Դ. Ի. Գ. գումարուեցաւ: Ս. Պատրիարքը անցեալ Շր. օրէն ի վեր տկար ըլլալով չկրցաւ նախագահել նիստին, և Ժողովը երկու ատենապետներուն յանձնեց իր կողմէ երթալ և հարցնել որպիսութիւնը Ն. Սրբազնութեան: Ժողովը զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով: — Նոր Նախիջևանի հոգեւոր կառավարութիւնը գրով մը տեղեկութիւններ տուած էր հանգուցեալ Միքայէլ Յովակիմ Գարասուէլեանցի կտակին տրամադրութեանց մասին, որոնց համաձայն հանգուցեալին թերեհին արդիւնքին մէկ քառորդ մասը յատկացուած էր Վանայ ազգ. կրթական հաստատութեան: Որոշուեցաւ խնդիրը յանձնել Կտակաց Հոգաբարձութեան, որուն կարծիքը ստանալէ վերջ հարկ եղածը ի գործ պիտի դնէ: — Էյուպի Ս. Աստուածածին թաղի հայ բնակչութիւնը հետզհետէ ցրուած և հազիւ 15 տուն մնացած ըլլալով, Ժողովը նկատելով որ նոյն թաղին մէջ բաւականաչափ ժողովուրդ չի գտնուիր և թաղ. Խորհուրդի կազմութեան փորձերը ի դերեւ ելած են, որոշեց առժամաբար նոյն եկեղեցիին մատակարարութիւնը յանձնել Պալատի թաղ. Խորհուրդին:

* Երուսաղէմի Պատր. տեղապահի խորհրդական Տ. Տրդատ Եպ. գրով մը յայտնած է թէ Սիօն լերան ստորոտը և Հայոց վանքին մօտ գտնուած զօրանոցը ծախու հանուած է, և այդ չէնքին գնումը ամէն կերպով նպաստաւոր պիտի ըլլայ, և առաջարկած է վանքին աւելորդ արծաթեղէնները և անհասցի կալուածները ծախել, այդ զօրանոցը գնելու համար:

* Խառն ժողովը որոշած է թագրիրով մը Դատական նախարարութեան դիմել ամէն առաջ Մուշի շուկային մէջ ձերբակալուած և ցարդ տրդեւափակ մնացած քահանային ազատ արձակման համար: Պատրիարքարանը պիտի բողոքէ այս ձեր-

բակալութեան դէմ, նկատելով որ ասով կը բռնաբարուին Պատր. տառնձնաշնորհումները, քանի որ հոգեւորականները ձերբակալու համար ըստ օրինի պէտք է պատրիարքարանի կամ Առաջնորդարանի հաւանութիւնն ստանալ:

ՅԻԿԻՆ ՆԵՐՈՒՄԱՆ ԽԱՆ, կրն Վիէնայի Պարսկական նախորդ դեսպան հանգուցեալ Նէրիման խանի և քոյր Վսեմ. Յովհաննէս պէյ Տատեանի, անցեալ Ե. օր զոհ գնաց աղետալի արկածի մը: Նամակներու ծրար մը ծով նետելու համար մեկնած էր Այ Սթեֆանոյի Տատեանց ապարանքէն և մինչեւ իրիկուն չէր վերադարձած: Տնեցիներու մահաճոգութեան վրայ, խուզարկութիւն կը կատարուի և ծովեզերքին վրայ հովանոցը կը տեսնուի, իսկ ժայռի մը ստորոտը անշուշտ մարմինը. ողնայարը ջախջախուած էր և քունքին վրայ վէրք մը կար: Կը կարծուի թէ ծրարը ծով նետած պահուն հաւասարակշռութիւնը կորսնցնելով ինկած և ողնախելը ջախջախուած է: Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Կիր. օր Այ Սթեֆանոյի եկեղեցիին մէջ: Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք Վսեմ. Յովհ. պէյ Տատեանի և իր պարագաներուն:

ՀԱՐՍՍԱՆԻՔ

Գընալիի եկեղեցիին մէջ անցեալ Ե. օր կատարուեցաւ պսակագրութիւնը Տիար Մկրտիչ Պարտիզպանեանի և Օր. Շուշան Բ. Բէչեանի: Արշարունի Սրբազանի անակրնկալ տկարութեան պատճառաւ կը նախագահէր հարիւրամեայ Տ. Դիոնէսիոս քնյ. որ խրատականը խօսեցաւ. իսկ երկու կողմէն տաներէց Տ. Վահան քնյ. Խոյեան պարագային յարմար քարոզով մը օրհնեց հարան ու փեսան և գովեց անոնց գնահատելի ձիրքերը: Մեր ջերմ շնորհաւորութիւնները երկու կողմին ալ, և մասնաւորապէս հարսին ծնողաց՝ Ազգ. կարող և առաջնակարգ հրապարակագիր Տիար Բիւզանդ Բէչեանի և իր Ազնուփայլ Տիկնոջ:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԲՆՆԵ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲՆՆԵ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Չափմանը, Յակոբեան խան

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Երիտասարդ Արմաշական Տ. Արտաւազդ Մ. Վ. Գալէնտէրեան, իր այս հրատարակութեամբ կը յայտնուի իբրեւ երաժշտագէտ: Սարսուռները՝ անմահ բանաստեղծ Դուրեանի Սեւ Հողերի քերթուածներն են եղանակաւորուած Տ. Արտաւազդ Վ. Է. և դաշնաւորուած Բրոֆ. Արշակ Թ. Տաղլըեանէ: Կը բաղկանայ հետեւեալ քերթուածներէն. Կոյր զինուորը (ողբերգ), Վրէժ (ռազմերգ եռաձայն), Լալոնք (ողբերգ) և Ստուերները Հայաստանին (ողբերգ քառաձայն): մաքուր վիմագրութեամբ հրատարակուած կը ծախուի գին 8 զրշ. Ի և արժանի է ամէն երաժշտասէրի դաշնակին վերայ գտնուելու:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Վիեննական Հայերու հմտալից հրատարակութիւն, նուիրուած Հայ բանասիրութեան, Հայ պատմութեան, և ին. քրեական ուսումնասիրութեան: Ներկայ տարեշրջանին հոգ տարուած է մասնաւորապէս ժողովրդային պահանջներու ալ գոհացում տալու: Տարեկան բաժնեգին՝ 15 ֆր. կամ 6 ռբ.: Մէկ թիւ 1.50 ֆր.: Հասցէ՝ Rédaction de la Revue «Handess Am-sorya» VIENNE VII/2, Mechitharistengasse 4.

Հրատարակուեցաւ Սեպտեմբերի թիւը:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՅԳԱԼՈՅՍ, Արշակունի Օրիորդին Արկածները. գրեց Մեսրոպ Վ. Ուղուրեան. — Վիպասանութիւն հմտալից տեղեկութիւններով, և հետաքրքրաշարժ ու մերթ զուարճալի պարունակութեամբ, գնահատուած Հայ-հռոմէականաց նախորդ Կ. Պատրիարք Տ. Պօղոս-Պետրոս ԺԱ. է: Գին 20 զրշ.:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԷՈՒԵԱՆ

ԱՍԱՄԱԲՈՅԺ

(Վկայեալ Կայսերական բժշկական վարժարանէն) Պեշիքաշ, Հայոց Եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակուայի և լինտերու ամէն տեսակ հիւանդութիւններ. կը չինէ բնականին յար և նման ակուաներ քառնուի կամ ոսկի փրաքի վրայ: Չափէն աւելի փտած ակուաները քուրոնէ կ'ընէ. կը չինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ քոսալլենէ:

Հիւանդ կ'ընդունի ամէն երեկոյ ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ուրիշ ատեններ՝ մասնաւոր ժամագրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Բաժանորդներէն անոնց որ դեռ չեն զրկած իրենց բաժնեգինը, վերստին կը յանձնարարենք փութացնել իրենց հաշիւին կարգադրութիւնը. հակառակ պարագային քերթին առաջումը չի կրնար շարունակուիլ: Նոյնը առաւել ևս կը յանձնարարենք Պատ. գործակալներուն: Տարին լմնալու վրայ է: Դրամի առաքման լաւագոյն միջոցն է մանսա-քօսը, ամէնէն պզտիկ գումարէն սկսեալ մինչև մեծագոյն գումարները: Թղթատարական փուլ զրկողները պէտք է 40 զրշ. Ի փուլ զրկեն (և ոչ թէ 38 զրշ. Ի), և առաւելապէս երկու փարսանոց, որովհետեւ 20 կամ 40 փր. նոց փուլի այնքան պէտք չունինք, և այստեղի նամակատունները չեն փոխեր: Փոխանակադրով կամ Պոլիս այս կամ այն տեղէն գանձելու յանձնարարութիւնք դժուարութեանց կամ յապաղումներու տեղի կուտան:

